ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

**12 -18**

«26» Հունվարի 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի թիվ 1, թիվ 2-Ն և թիվ 3-Ա որոշումները:

Առդիր 5 թերթ:

Վահագնի համայնքի ղեկավար Պ.Քոչինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի, հեռ.0322- 6-95-37
էլ. փոստ` vahagni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունվարի 2018 թ. N 01

## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Վահագնի համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Վահագնի համայնքի ավագանու 2018թ.-ի հունվարի 19-ի նիստի օրակարգը:

Օրակարգ
Վահագնի համայնքի ավագանու 2018թ.-ի հունվարի 19-ի նիստի

1. Վահագնի համայնքի ղեկավարի 2017 թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և 2017 թվականի Վահագնի համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ավագանուն ներկայացնելու մասին.
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Օհանյան Լևոն | | | |

Համայնքի ղեկավար` Պ.Քոչինյան
գ. Վահագնի
19. 01..2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

« 19 » հունվարի 2018 թվականի թիվ 2-Ն

## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով `

Վահագնի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Վահագնի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2017 թվականի Վահագնի համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | [signature] | | |
| Մքոյան Էդիկ | [signature] | | |
| Քոչինյան Գարեգին | [signature] | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Օհանյան Լևոն | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ ____________ / Պ.Քոչինյան /

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ավագանու
2018 թվականի հունվարի 19-ի N 2-Ն որոշման

1. Վահագնի համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն

եկամուտների գծով`

| | |
|---|---|
| պլան | 24369.9 հազ. դրամ |
| փաստացի | 25112.9 հազ. դրամ |
| կատարման % | 103 % |

ծախսերի գծով

| | |
|---|---|
| պլան | 24236.4 հազ. դրամ |
| փաստացի | 27975.8 հազ. դրամ |
| կատարման % | 115.4 % |

2. 2017 թվականի Վահագնի համայնքի զարգացման ծրագրի վերաբերյալ հաշվետվություն

2017թ. Վահագնի համայնքում կատարվել է թաղամասերի գազաֆիկացման աշխատանքներ` 50% , աշխատանքները կիսատ են մնացել բյուջեի սղության պատճառով :

2018 թվականին նախատեսված է իրականացնել փողոցների բարելավման և լուսավորման աշխատանքներ:

Յամայնքի ղեկավար` Պ.Քոչինյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, հասցե գ Վահագնի ,
հեռ.0322 6-95-37 էլ. փոստ՝ vahagni.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19 » հունվարի 2018 թվական, 3 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 20 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 9-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Վահագնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մայիլյան Պետրոս | | | |
| Մքոյան Էդիկ | | | |
| Քոչինյան Գարեգին | | | |
| Օհանյան Լևոն | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________________ Պ. ՔՈՉԻՆՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ավագանու
2018 թվականի հունվարի 19-ի N 3-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Սամվել Բեգլարյան երեսուն հազար դրամ, հարազատի հողարկավորության ծախսերի մասնակի հատուցման գումար :
2. Անուշ Գրիգորյան երեսուն հազար դրամ, հարազատի հողարկավորության ծախսերի մասնակի հատուցման գումար :
3. Նաիրա Հովհաննիսյան երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
4. Աիդա Ջհանգրիյան երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
5. Հասմիկ Գալոյան երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
6. Ջուլիետա Բաղրամյան երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
7. Հասմիկ Դալլաքյան երեսուն հազար դրամ, երեխայի ծննդյան գումար:
8. Խառատյան Կարինե հիսուն հազար դրամ , սոց. Օգնություն:
9. Կիրակոսյան Նազելի հիսուն հազար դրամ , սոց. Օգնություն
10. Ավետիսյան Մարիամ հիսուն հազար դրամ , սոց. Օգնություն
11. Կիրակոսյան Շաղիկ հիսուն հազար դրամ , սոց. Օգնություն

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ________________ Ն.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
(ստորագրություն)